Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՊԱՐՈՅԻՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂ ԲԱՆՎՈՐ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ



Հրատարակվել է Բաքվի տնտ. սովետի քաղաքի

Երկիր № 218 Ե-ԲԱՅԼԶՈՒ Տիրաժ 500 օր.

29 JAN 2018

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Սույն կոլպայմանագիրը կնքվում է մի կողմից՝ Մսա-ձկա-կոնսերվի արհմիության ձկնարդյունաբերության շրջխմբկոմի հանձինս խմբկոմի նախագահ՝ Յեղիազար Մանուկյանի և մյուս կողմից Հայձուկտրեստի միջև հանձինս տրեստի կառավարիչ Եմանուել Հովսեփյանի։

1. ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏՖԻՆՊԼԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳԾՈՎ

1. Հավաքական պայմանագիրն իր հիմնական խնդիրն է դնում ընկ. Ստալինի 6 պայմանների հիման վրա ապահովել հնգամյակի 4-րդ յեզրափակման տարվա արտադրական տնտեսական առաջադրությունները, ըստ ամենայնի հաջող կատարման։ Առաջադրությունները, վորոնք դրվում են բանվոր դասակարգի և աշխատավորական մասսաների առաջ, ժողովրդական տնտեսության հետագա վերակառուցման, յերկրի ինդուստրացման, գյուղատնտեսական սոցիալիստական վերակառուցման և այդ հիման վրա ԽՍՀՄ-ի բանվոր դասա-

կարգի և վողջ աշխատավորության նյութական կուլտուրական, կենցաղային դրության հետագա անշեղ բարելավման ապահովումն։

2. Սրան համապատասխան վարչությունը, գործարկումը, բանվորները և ծառայողները պարտավորություն են վերցնում կատարել 32 թվի համար սահմանված արտադրանքի, ինչպես նաև ձեռնարկության բանվորների կողմից առաջադրած և վարչության կողմից ընդունված հանդիպական արտադրանքից բղխող առաջադրություններից հետևյալ քանակական և որակական ցուցանիշները։

ա) Ընդհանուր արտադրանք 10.000 ցենտներ ձուկ և հանդիպական պլան 1900 ց., աշխատանքի արտադրողականության բարձրացումը 20 տոկոսով։

բ) Աշխատավարձի ավելում 10%-ով 31 թվի տարեկան միջին աշխատավարձի համեմատությամբ։

գ) Բանվորների թիվը 220 հոգի (միջին) ըստ առանձին շրջանների, այդ

1-3504գր

ցուցանիշները պետք է կատարվեն հետևյալ կերպ՝

Ձկնորսարանների անունները	Ցատրաստի արտադրանք	Բանվոր. թիվը	1 բան. արտադրանք	1 բան. աշխատավ.	Ինքնարժեքի իջեցում
	32 թ. տոկոսը 31 թ. համեմատությամբ				
Նորագուղի	101,2				
Զաղալույի	90,6	101,3	20 %	9,3	
Ադյամանի	122,3				
Քոլաղանի	106,6				
Ցելենովկա	89,8				
Շորժա	162,0				

Ծանոթություն. Ի լրացումն սույն պայմանագրի ձկնորսարանի վարչությունը և ձկնարդկոմի միջև վոչ ուշ քան ..... կնքվում է հատուկ համաձայնագիր, վորոնք կոնկրետ ձևով նախատեսվում են 32 թ. արտադրանքի տվյալ շրջանին ընկնող ապմասի ապահովող հիմնական միջոցառումները։

3. 2-րդ պարագրաֆում ցույց տրված առաջադրությունները կատարելու համար, պարտավորվում ենք հաստատապես կիրառել միանձնյա ղեկավարությունը, տնտեսավարկը, ճիշտ կազմակերպել արտադրության պրոցեսները վերակառուցման, մեքենայացման և

ռացիոնալացման հիման վրա, զարգացնել աշխատանքի կազմակերպման սոցիալիստական ձևերը, ամրացնել աշխատանքի կարգապահությունը, սոցմրցման ու հարվածայնության մեթոդները, զարգացնել նրա բարձր ձևերը, խորհրդային հանդիպական պլաններում, տնտեսաշվարկային բրիգադներ, վերացնել վարձատրության մանր բուրժուական հավասարեցումը, վերացնել դիմազրկությունը, խիստ խնայողության ռեժիմ կիրառել ձկան, վառելանյութի, ուռկանների, բուդարկաների և բոլոր տեսակի ձկնորսական նյութերի, առավելագույն չափով յերևան հանել ու ոգտագործել ներքին ռեսուրսները, այդ թվում, տեխնիկական սարքավորումների տեխնիկական կարողությունը, խնամքով վերաբերվել դազգյահներին, մեքենաներին, գործիքներին, ակտիվ պայքարել արտադրության վորակի բարձրացման և պարապուրդներ ու խոտանի կրճատման համար։ Բանուժի կազմակերպված հավաքագրում կատարել, վերացնել բանուժի հոսունությունը և յերևան հանել նրա ավելցուկները։

4. Վարչությունը պարտավորվում է՝

ա) 32 թ. պլանների առաջադրությունը հասցնել ցեխերին և առանձին բրիգադներին և անհատ բանվորներին, քան հաջորդ ամսվա 25-ին արտադրանքի առաջադրությունները։

բ) Նյութեղենի, վառելանյութի և ձկնորսական գործիքների ծախսման նորմա սահմանել, ըստ արտադրանքի տեսակի ամենորյա ներցեխային կանտրոլ կազմակերպել այս նորմաների կատարման արտադրանքի վրա։

գ) Ապահովել հումքի, վառելանյութի, կիսաֆաբրիկանտների, գործիքների, նյութեղենի ու պահեստի մասերի անխափան մատակարարումը և մշտական կանտրոլ սահմանել ձեռնարկությունն բերվող հումքի, վառելանյութի, կիսաֆաբրիկանտ գործիքների և նյութեղենի վորակի վրա։ Դրա համար նշանակելով պատասխանատու անձինք։ Նյութեղենը վատորակ լինելու դեպքում, միջոցներ ձեռք առնել մատակարարող-

ների նկատմամբ համաձայն տնտեսաշվարկի վերաբերյալ որենսդրությունը, իսկ վատորակ հումքը ու նյութերն ստանալու համար մեղավորներին պատասխանատվության յենթարկել։

դ) Բանուժի կազմակերպված հավաք կատարել, յերևան հանել ավելցուկ բանուժը և այն վերաբաշխել պլանային կարգով։

յե) Ճիշտ կազմակերպել աշխատանքը բանվորներին վորոշ դաշտյահներին, ուռկաններին ամրացնելով։

զ) Անցկացնել պլանային կանխիչ վերանորոգում։

է) Արմատացնել ուղիղ գործարք և վարձատրման այլ խրախուսիչ ձևերը, ավելացնել տեխնիկական չափավորման ընդգրկվելիք աշխատանքների թիվը և բանվորների աշխատանքի ու աշխատավարձի հաշվառում կազմակերպել, կիրառել անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պայմանների առողջացման բոլոր միջոցառումները։

ը) Յեռամսյակում առնվազը մեկ անգամ գործարկումին ներկայացնել

արտադրանքի արտադրողականության ու աշխատավարձի վերլուծության ըստ աշխատանքի առանձին խմբերի և աշխատանքի վարձատրման զանազան սիստեմների արդյունավետության վերաբերյալ տվյալներ։

թ) Ամեն կերպ աջակցել աշխատանքի կազմակերպման, սոցիալիստական ձևերի հարվածային բրիգադների որինակելի արտադրանքի բրիգադների, տնտեսաշվարկային բրիգադաների, հերթային հանդիպական պլանավորման և այլ ձևերի ծավալման։

ժ) 10-որյակում մեկ անգամ գործարանային ու ցեխային կոմիտեների տվյալներ ներկայացնել. արտֆին-պլանների քանակական և վորակական առաջադրություններ մասին, առանձին-առանձին ըստ հետևյալ բրիգադների՝ Նորաղուզ, Զաղալու, Ադյաման, Քոլաղուան, Յելենովկա, Շորժա։

ի) Ամեն կերպ աջակցել աշխատողների հանրային սննդի, բնակարանային ու կուլտուր-կենցաղային բարելավմանը։

 լ) Աշակցել բանվորների տեխնիկական մակարդակի բարձրացմանը, մասսայական տեխպրոպագանդա կազմակերպելու միջոցով,

խ) Գիշերայինհերթային բանվորների համար ևս ապահովել նույն սպասարկումն ինչ ցերեկային հերթին։

5. Բանվոր ծառայողները պարտավորվում են՝

ա) Լիովին վերացնել անհարգելի պատճառներով գործալքումները, միջոցներ ձեռք առնել կանխելու և կրճատելու պարապուրդները։ Առավելագույն չափով բեռնավորել բանվորական որը, կատարել ու գերակատարել սահմանված արտադրական առաջադրությունները, միաժամանակ լավացնելով աշխատանքի վորակը, վերացնելով խոտանը։

բ) Խնամքով վերաբերվել սարքավորումներին ու գործիքներին, խնայողաբար ծախսել հումքը, վառելանյութը, կիսաֆաբրիկանտները և նյութեղենը, թույլ չտալ ավելացնելու բանուժի նյութեղենի, հումքի ծախսման պլանով սահմանված նորմաները։

գ) Սիստեմատիկորեն բարձրացնել տեխնիկական վորակավորումը, հաճախելով պոլիտեխնիկական դպրոցներ, խմբակներ և այլն։

դ) Ակտիվ մասնակցել արտադրական խորհրդակցություններին, արտադրության բարելավման և աշխատանքի կազմակերպմանը։

յե) Աշակցություն ցույց տալ կուսակցական ու պրոֆմիութենական կազմակերպություններին, նորբանվորներիկուլտուր-կրթական պայմանների գործում։

զ) Աշակցել բանուժի կազմակերպված հավաքագրմանը։ Արտադրության մեջ ներգրավել աշխատողների ընտանիքի անդամներին և ոգնել ավելցուկ բանուժի հայտնաբերման և նրա պլանային վերաբաշխման։

է) Վորակյալ բանվորները պարտավորվում են իրենց արտադրական փորձն ու գիտելիքները փոխանցել բանվորական նոր կադրերին։

6. Գործարկոմը պարտավորվում է՝

ա) Ձեռնարկության բանվորներին և ծառայողներին մոբիլիզացիայի յեն-

թարկել արտֆիիպլանների ցուցանիշների կատարման համար, սոցմրցման ու հարվածայնության և դյուտարարության հետագա զարգացման, արտադրական խորհրդակցությունների աշխատանքների ուժեղացման և աշխատանքի կազմակերպման հարցերի նկատմամբ նրանց ուշադրության ավելացման միջոցով։

բ) Բանվորական ակտիվի միջոցով սիստեմատիկ հսկողություն կազմակերպել արտֆինպլանի քանակական և վորակական ցուցանիշների կատարման համար։

գ) Մանակցել բանվորների ընտանիքների անդամներին արտադրության մեջ ներգրավելու և կոլտնտեսականների հետ պայմանագրեր կնքելու աշխատանքին։ Շեֆական աշխատանքի կարգով ոգնել աշխատանքի կազմակերպման, կոլտնտեսություններում բարելավելու և ավելորդ բանուժի այնտեղ ազատելու գործին ապահովելով սոցմրցման պայմանագրերի կատարումը, հավաքագրված բանվորների կուլտուր-կենցաղային քաղաքական սպասարկման գործին։

դ) Ոժանդակել աշխատանքի կարգապահության ամրացման, զարգացնելով կուլտուր-քաղաքական աշխատանքը և հասարակական ներգործության միջոցները, կիրառելով չվողների ու պոկողների և աշխկարգապահության այլ խախտողների նկատմամբ։

յե) Ակտիվ մասնակցել աշխատանքի կազմակերպմանը, բանուժի ավելցուկի հայտնաբերման և նրա պլանային վերաբաշխման, ապահովել հսկողություններ ու ակտիվ ոգնությունը բնակարանների, մանկամսուրների, մանկապարտեզների և բաղնիքների շինարարության խնդրում։

զ) Վարչության հետ մեկ տեղ կազմակերպել ինֆորմացիոն աշխատանք, վորի միջոցով բանվորներին տեղեկացնել արտադրական առաջադրությունների կատարմանընթացքի, սոցմրցմանու հարվածայնության արդյունքների մասին։

ե) Ձեռնարկություններում բանվորների վորակավորման բարձրացման և վերավորակավորման դասընթացների ու խմբակների ցանցը ծավալել։

ը) Կազմակերպել գիշերային հերթերում զբաղված բանվորների բազմակողմանի սպասարկում։

թ) Ամեն կերպ աջակցել վարչության ձեռնարկությունում հակախորհրդային պաշտպանության գործում, ապահովել միության անդամների ակտիվ մասնակցությունը բանվորական հրդեհաշեջ խմբերում։

2. ԲԱՆՈՒԺԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ, ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ

7. Բանուժի հավաքագրումը կատարում է վարչությունը կազմակերպված ձևով։ Հավաքագրումը կատարում է կոլտնտեսությունների կամ աշխատանքի մարմինների հետ պայմանագրեր կնքելու և բանվորների ու ծառայողների ընտանիքի անդամների արտադրության մեջ ներգրավելու միջոցով։ Վարչությունը պատասխանատու անձինք է նշանակում բանուժի ընդունելու և արձակելու համար, գործարկումի իր կողմից նշանակում է իր անդամնե-

րից մեկին բանուժի հավաքագրման գործի վրա հսկելու համար, Վարչությունը պարտավոր է յուրաքանչյուր նոր ընդունվող աշխատողի մասին 3 որվա ընթացքում հայտնել գործարկումին, վերջինս իրավունք ունի այդ մասին իմանալուց հետո, 3 որվա ընթացքում պատճառաբանված մերժում ներկայացնել։

8. Աշխատանքի կարգապահության խախտման համար արձակված անձանց աշխատանքի ընդունում է վարչությունը, միայն թե նախորոք համաձայնեցնելով գործարկումի հետ։

9. Կանանց աշխատանքի արմատացնելու նպատակով, վարչությունը պարտավորվում է 32 թ. ընթացքում աշխատանքի ընդունել 10 կին լաբազում աշխատելու և վորակավորվելու համար, բացի այդ նաև ներգրավել մնացած անհրաժեշտ տեղերում, վորտեղ անհրաժեշտ է կանանցով փոխարինել, նախորոք նրանց անցկացնելով կարճ դասընթացներով, ինչպես նաև պահպանել ԽՍՀՄ-ի Աշխժողկոմատի 31 թ. մայիսի

19-ի վորոշումը, վորոշ պաշտոններ ու պրոֆեմիտներ միայն կանանց տալու մասին։

10. Վարչությունը պարտավորվում է՝

ա) Սիստեմատիկ կերպով յերեվան հանել բանուժի ավելցուկը, այն պլանային կարգով վերաբաշխել. ինչպես տվյալ ձեռնարկության մեջ, նույնպես և մյուս ձկնորսարաններում համաձայն վերադաս մարմինների ցուցմունքների։

բ) Ազատված պաշտոններն ու աշխատանքները լրացնելիս, ինչպես նաև նոր աշխատանքների համար ընդունելությունը կատարելիս, առաջին հերթին ավելի վորակյալ աշխատանքի փոխադրել հարվածային բանվորներին ու ծառայողներին, կանանց ու յերիտասարդներին, վորոնք պատրաստված են տվյալ աշխատանքում, ինչպես նաև այն անձանց, վորոնք աշխատանքի ավելի յերկար ստաժ ունեն տվյալ ձեռնարկությունում և վերջապես այն բանվորներին, վորոնք ավարտել են պրոֆտեխնիկական դասընթացները։ Վարչությունը պարտավոր է յուրաքանչյուր յեռամ-

սյակին բանվորներին ավելի բարձր վորակավորում պահանջող աշխատանքի փոխադրելու կոնկրետ պլան մշակել, մատնանշելով բանվորների պրոֆեսիայի թիվը այդ մասին հաղորդել գործարկոմին։

գ) Իր վրա վերցնել բանվորների արտադրական եքսկուրսիայի ծախսերը— 6000 ռուբլու սահմաններում։ Եքսկուրսիայի վայրն ուղարկել 10—12 բանվորներ, 1 և կես ամսից մինչև 2 ամիս. բանվորների ցուցակները յուրաքանչյուր առանձին դեպքում համաձայնեցնել գործարկոմի հետ, նախորոք կազմելով մարշրուտի համար կոնկրետ ծրագիր մատնանշելով բոլոր անհրաժեշտ պայմանները։

դ) Վարչությունը պարտավորվում է 32 թ. ընթացքում գործարանի տեխնիկական դասընթացքներում պատրաստել ու վերապատրաստել 40 հոգի։

յե) Բանվորներին ձեռնարկությունից դուրս ուսանելու համար գործուղել 5 հոգի, վորի ծախքերը վարչության հաշվին։ Գործուղվողների ընտրությունը

կատարվում է գործարկումի հետ համաձայնեցնելով։

11. Վարչությունը պարտավորվում է 2 շաբաթյա իրիկնային դասընթացներ կազմակերպել նոր ընդունվող բանվորների համար, նպատակ ունենալով նրանց ծանոթացնելով արտադրության առանձնահատկությունների և անվտանգության տեխնիկայի հետ։ Բանվորներն իրենց հերթին պարտավորվում են հաճախել այդ դասընթացքներին։

12. 32 թ. ընթացքում վարչությունը պարտավորվում է ֆաբգործուսներ և մասսայական պրոֆեսիաների դպրոցներն ընդունել 30 աշակերտ, նախորոք տանել համապատասխան աշխատանք այդ ասպարիզում։

Ծանոթություն. Ֆաբգործուսներում առաջին հերթին ընդունվում են հարվածային և յերկարամյա ստաժի տեր բանվորների յերեխաները, մանկատների սաները և այն կոլտնտեսականի յերեխաները, որոնց հետ պայմանագիր է կնքվել ավյալ ձեռնարկությունում։

13. Վարչությունը պարտավորվում է ուսումն ավարտող աշակերտներին ոգ-

տագործել արտադրության մեջ, ըստ նրանց մասնագիտության, ֆաբգործուսից դուրս գալուց հետո, ապահովել նրանց համար աշխատանքի այնպիսի պայմաններ, որոնք նպաստեն նրա վարակավորման բարձրացմանը և սիստեմատիկ կերպով առաջ քաշել նրան ձեռք բերելու վարակավորում։ Ֆաբգործուսի աշակերտները պարտավորվում են բարձրացնել իրենց տեսական ու գործնական ուսման մակարդակը, խնամքով վերաբերվել սարքավորումներին ու դազգյահներին, նյութերին, գործիքներին, մասնակցել արտադրական կյանքի ռացիոնալացման գյուտարարության և կատարել ներքին կարգապահական բոլոր կանոնները։

Վարչությունը պարտավորվում է ուսումնական արտադրական բանվորական որ սահմանել ֆաբգործուսներում, հաստատուն հարաբերականություն ստեղծելով տեսական ուսման և արտադրական պրակտիկայի միջև։

14. Ամենամեծ ինքնագործունեություն ունեցող բանվորներ, որոնք ավարտում են վերարտադրողական վարակավորման

1-35494

ԳՐԱԴԱՐԱՆ

բարձրացման և վերավորակավորման դասընթացները, պարտավոր են տվյալ ձեռնարկությունում աշխատել վոչ պակաս 3 տարի։ Այն անձինք, վորոնք ձեռնարկության հաշվին վորակավորում են ստանում, կամ բարձրացնում են այն, յեթե 14-րդ կետում նշված ժամկետից առաջ առանց հարգելի պատճառների հեռացման աշխատանքից կամ հեռացվեն աշխատանքի կարգապահությունը խախտելու համար պարտավոր են ձեռնարկության հատուցել ուսման վրա ծախսված ամբողջ գումարը, չաշխատած ժամանակի համեմատ։

15. Վարչությունը պարտավորվում է ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմաններ, վորպեսզի ուսանողները հաջողությամբ կատարեն արտադրական պրակտիկան, դրա պատասխանատվությունը դնելով այդ նպատակի համար ձեռնարկության հատուկ անձնավորության վրա։

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

16. Գործարանի վարչությունը պարտավորվում է.—

ա) 5 որվա ընթացքում քննել այն բոլոր ռացիոնալիզատորական առաջարկները, վորը ստանում է արտխորհրդակցության բանվորներից և ծառայողներից և նույն ժամկետում հեղինակին հայտնել արդյունքների մասին։ Առաջարկները կամ գյուտերն ընդունելուց և նրանց տնտեսական եֆեկտը վորոշելուց հետո, նրանց հեղինակներին պարգևատրել, համաձայն պարգևատրման մասին գոյությունն ունեցող կանոնադրության և ընդունված առաջարկները կատարել սահմանված ժամկետում։ Առաջարկի ոգտակարության վերաբերյալ տարաձայնությունները վերջնական լուծում ստանալու համար, փոխադրվում են վերադաս տնտեսական և պրոֆմիութենական կազմակերպությունները։

բ) Բանվորական առաջարկների կատարելագործումների և գյուտերի եքսպերտ քննությունը, հաշվառումն և իրացումն ապահովել անհրաժեշտ արտադրական բազա կազմակերպելու միջոցով—արհեստանոցներ, լաբարատորիաներ, տեխնիկական կոնսուլտացիաներ

և այլն. ակտիվ աջակցություն ցույց տալ արտադրական խորհրդակցություններին և նրանց համար զեկուցումներ և նյութեր ապահովելով, վերցնելով իրանց վրա հրավիրված արտադրական բոլոր կոնֆերանսների ծախքերը։

զ) Սիստեմատիկ հաշվառման յենթարկել հարվածային բրիգադների ու մրցումների աշխատանքը, որի պատասխանատվությունը դնել առանձին վիճակագիր աշխատողի վրա վոչ ուշ քան յուրաքանչյուր ամսի 5-ին գործարկոմին տեղեկություններ ներկայացնել, հարվածային բրիգադների ու մրցողների աշխատանքի մասին։ Նաև ձկնորսարաններում հաշվառում կատարելու համար, նշանակել հատուկ մարդ։

դ) Յեթե բրիգադն ցանկություն ե հայտնում տնտեսավարկի անցնել 5 որվա ընթացքում լուծել այդ հարցը, մշակել բրիգադի կամ առանձին անհատների աշխատանքի ցուցանիշները և բրիգադի հետ կնքել տնտեսավարկային պայմանագիր համաձայն ԺՏԳԽ-ի և ՀԱՍԿԻ-ի 31 թ. սեպտեմբերի 31-ի վորոշումը։

յե) Տնտեսավարկային բրիգադներին ժամանակին մատակարարել հումքը և նյութերը, գործիքները, ժամանակին վերանորոգել սարքավորումներ, ինչպիսին ե ուռկանը, պրոբեզներ, նեվանիկներ, բուղարկաներ և այլն։ Նաև հաշվառման յենթարկել տնտեսավարկային բրիգադների պարտավորությունների կատարումը և արտադրական նվաճումների համար պարգեվատրում կազմակերպել։

զ) Սոցմրցման ֆոնդի հաշվին, վորոնք գոյանում են այն կարգով, վորը նշել ե ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 31 թ. ոգոստոսի 13-ի վորոշումը, լայնորեն զարգացնել լավագույն հարվածայինների և տնտեսավարկային բրիգադների առանձին շրջանների պարգեվատրման սիստեմը։ Յեթե նրանք աշխատանքի լավագույն արդյունքներ ունեն (քանակական և վորակական առաջադրությունների կատարումն ու գերակատարումը) յեթե նրանք նախաձեռնություն են հայտնաբերում սոցմրցման և աշխատանքի կազմակերպման այն բոլոր ձեվերի ծավալման գործում, վորոնք նպաստում են արտֆինպլանների կատարմանն ու գերակատարմանը։ Լավագույն հարվածային աշակերտների պարգևատրումը

կատարում են այն չափով, ինչ չափով չափահաս բանվորներին—համահավասար հիմունքներով, յեթե նրանք վորակական առաջադիմություն են ցույց տալիս դպրոցում և արտադրության մեջ, ժամանակից առաջ են կատարում ուսումնական արտադրական ծրագիրը, հայտնաբերում են բարձր կարգապահություն և այլն։ Պարգևատրման թեկնածուներին առաջադրում է վարչությունն ու գործարկոմը կամ արտադրական խորհրդակցությունը։ Թեկնածությունները քննության են առնվում արտադրական խորհրդակցություններում և կոնֆերանսներում.

16. Գործարկոմը պարտավորվում է սիստեմատիկ ղեկավարություն ցույց տալ և հրահանգել հարվածային տնտեսաշվարկի բրիգադների կազմակերպիչներին. կազմակերպել արտադրական խորհրդակցություններ ըստ առանձին խմբերի և պրոֆեսիաների և ստեղծել պայմաններ բանվորների և վարչության լայն մասնակցությունը։

17. Վարչությունը, գործարկոմը, բանվորները և ծառայողները պարտավորվում են—ամրացնել աշխատանքային կարգապահությունը, հաստատապես կիրառել միանձնյա ղեկավարությունը և նրանց զուգադրելով մասսայական կուլտուր-քաղաքական աշխատանք—ամեն կերպ և անպայման կատարելով ներքին կարգապահական կանոնները, կիրառելով տուժացուցակ և հասարակական ներգործության միջոցները։

18. Վարչությունը և գործարկոմը պարտավորվում են նպաստավոր պայմաններ ստեղծել արտադրական-ընկերական դատարանների համար։ (Շենք հատկացնել, ապահովել հրահանգումն ու ղեկավարությունը գործարկոմների կողմից կենսագործել արտադրական-ընկերական դատարանների վորոշումները և այլն)։

19. Ցածր վորակավորման մշտական աշխատանքի փոխանցումը թույլատրվում է այն դեպքում, յեթե ԳԿՀ-ն կամ բժշկական հանձնաժողովը կգտնեն, վոր այդ աշխատողն անպետք է տվյալ աշխատանքի համար, ինչպես նաև այն դեպքում, թե նա սիստեմատիկ կերպով թերակատարում է նորմաները և սահմանված %-ից ավելի խոտան է տալիս այն աշխատողները, վորոնք արտադրական բնույթի պատճառներով փոխվում են ավելի քիչ վար-

ձատրվող աշխատանքի. գերազանց իրավունք են վայելում իրեն նախկին աշխատավարձը ստանալուն։ Յեթե աշխատանքը վերանորոգվում է փոխանցման որից հաշված 3 ամսվա ընթացքում, նույնպիսի իրավունք ունի հիվանդության պատճառով ճիշտ աշխատանքի փոխադրված բանվորները նա արդեն առողջացել է։

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԱՓԱՎՈՐՈՒՄԸ

20. 1-ին կարգի դրույքը սահմանվում է գործարքով աշխատող բանվորների համար մեկ որվա համար 1,94 ռուբլի։ 2 դրույք գործարքային ու ժամանակավարձ աշխատողների համար սահմանվելու յե, ինչպես նաև գերվաստակ հաշվարկային տոկոսները վերացնելու հարցը լուծվում է համաձայն այն բանի, վոր տվյալ ձեռնարկությունում մտցվում են, յեթե չեն մտցվում նոր տարիֆային ցանցերի տեղեկագրերը։ Յելնելով այն վորոշումից, վորն ընդունել է ՀԱՍԿԽ-ն և ԺՏԳԽ-ն 32 թ. կոլպայմանագրերի կնքման մասին։ Գործարքով և ժամանակավարձ աշխատողների ժամային դրույքը սահմանվում

են համաձայն հետևյալ տարիֆային ցանցով աշխատողների տարիֆիկացիայի։

ԿԱՐԳԵՐ	1	2	3	4	5	6	7	8
Կոեֆիցիենտ	1,0	1,15	1,3	1,45	1,65	1,9	2,2	2,6
Գործարքայինների ժամային դրույքները	—	—	—	—	—	—	—	—
Ժամանակավարձ աշխատողների ժամանակային դրույքները որեկան	1,83	2-10	238	265	3-02	3,45	4,03	4,76

21. Բանվորների անձնական ժամային բաժանումը ըստ տարիֆային ցանցի կարգերի կատարում է համաձայն արդյունաբերության մեջ գործող տարիֆային տեղեկագրի. բաժինների պետերի միջև ինքնուրույնաբար տարիֆիկացիայի հողի վրա բանվորների ու ցեխերի պետերի միջև առաջացող կոնֆլիկտները լուծվում են գնահատումկոնֆլիկտային հանձնաժողովի միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում, համագործարանային ԳԿՀ-ի միջոցով։

22. Ժամանակավարձ աշխատող բանվորների գոյություն ունեցող յերաշխավորյալ գերվաստակները վերացվում են, նրանց փո-

խարեն բանվորներին այդ խնամքի համար սահմանվում է պարգևատրում, յեթե նրանք աշխատում են վարչության սահմանած ժամկետներին, ինչպես նաև, յեթե նրանք կատարում են աշխատանքի վորակական ցուցանիշները, պարգևատրումը կատարվում է համաձայն վարչության և գործարկոմի մշակած կանոնադրության կոլպայմանագրերի հավելվածք №.....։

23. .....կարգով տարիֆիկացիայի յենթարկվող բարձր վորակավորման տեր բանվորների համար, վորոնք վճռական նշանակություն ունեն արտֆինպլանի կատարման գործում.(առաջնատար պրոֆեսիաներ, ըստ առանձին շրջանների) ուռկանավարների, ավյալ կարգի տարիֆային դրույքից .....տոկոս բարձր, վարձատրություն (թվել պաշտոններն ու տոկոսների չափը ըստ ցեխի պրոֆեսիաների)։

24. Այն արտադրանքը և կիսաֆաբրիկանտները, վորոնք չեն համապատասխանում տեխնիկական պայմանների պահանջների չափի ճշտությանը, վորակի և այլ տեսակի համարվում են խոտան և արտադրվում են հետևյալ հիմունքներով։

ա) Վոչ աշխատողի պատճառով առաջացած խոտանը վարձատրվում է ժամանակավարձ տարիֆային դրույքի մինչև 2/3-ի չափով, յեթե աշխատողը պահպանել է բրակի կանխելու համար բոլոր պահանջները։

բ) Յեթե խոտանը հայտնաբերելիս բանվորը չի հայտնում այդ մասին ցեխային վարչությանը և շարունակում է մշակել առարկան այդ դեպքում այն ժամանակը, վորը նա վատնել է խոտան արտադրանքի վրա, չի վարձատրվում։

գ) Բանվորի պատճառով առաջացած խոտանը, արտադրանքը վատորակ, հետագա մշակման և բաց թողման համար անպետք է, չի վարձատրվում։

դ) Այն դեպքում, յերբ արտադրածը իր վորակից և արժեքից ցածր է, վարձատրությունը տրվում է իջեցրած գներով, վորը սահմանում է վարչությունը։ Այդ հողի վրա ծագած բոլոր վեճերը քննվում են ԳԿՀ-ում։

25. Յեթե խոտանն առաջացել է վարչության տեխնիկական կազմի պատճառով, վորը կրկնվում է տեխնոլոգիայի լրիվ կայունացած պայմաններում, ադմինիստրատիվ տեխնիկական կազմից համապատասխան դե-

կավարները կրում են նյութական պատասխանատվություն։ Այդ պատասխանատվությունը չի կարող տարածվել այն դեպքերի վրա, յերբ խոտանը տեղի յե ունենում արտադրական փորձի, կամ ռացիոնալացման ձեռնարկումները կիրառելիս, վորոնք կապված են վորոշ արտադրական վստահության հետ։

26. Յեթե դաղարը տեղի յե ունեցել աշխատողի կամ մի խումբ աշխատողների անփույթ վերաբերմունքի կամ տեխնիկական թե ներքին կանոնների խախտելու հետևանքով, ինչպես նաև վարչության կարգադրությունները չկատարելու և դիտավորյալ կերպով աշխատանքից խուսափելու դեպքում, այդպիսին չի վարձատրվում և բացի դրանից մեղավորները կրում են նյութական պատասխանատվություն կամ հեռացվում են առանց լուծարքի վարձատրության։ Բանվորներից անկախ պատճառներով դաղարը վարձատրվում է ժամանակավարձ աշխատողի տարիֆային դրույքի 50 տոկոսի չափով, ըստ վորում աշխատողը պարտավոր է անմիջապես հայտնել վարչությանը դաղարի մասին, հակառակ դեպքում, դաղարը չի

վարձատրվում։ Ձեռնարկությունների և հիմնարկների վարչությունները պարտավոր են միջոցներ ձեռք առնել դաղարները վերացնելու և կանխելու համար, իսկ այն դեպքում, յերբ այդ անխուսափելի յե, պարտավոր են աշխատողներին ոգտագործել այլ աշխատանքներում։ Խոտանի աշխատողին ավելի ցածր դրույքի և աշխատանքի տեղափոխելիս վարձատրությունը կատարվում է համաձայն ԽՍՀՄ-ի ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 31 թ. հուլիսի 3-ի վորոշման։ Այն դեպքում, յերբ դաղարը տեղի յե ունենում վարչության պատճառով, անփույթ վերաբերմունք դեպի հանձն առած աշխատանքը տնորինելու անկարողության մեղավորները կրում են պատասխանատվություն համաձայն տուժի տախտակի և բացի այդ կրում են նյութական պատասխանատվություն հասցրած վնասի համար։

27. Անհատական և բրիգադային աշակերտության, ֆաբգործուսների աշակերտները վարձատրվում են ըստ հետևյալ 4 կարգանոց ցանցի և որական դրույքի։

ԿԱՐԳԵՐ	1	2	3	4
Կոեֆիցիենտ	1,0	1,2	1,5	1,9
Որական դրույք.				

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Եթե ուսման ժամկետը 3-ից և 2 ու կես տարի յե 5-րդ կիսամյակի աշխատանքները, փոխադրվում են բանվորների կարգը և վարձատրվում են ըստ փաստորեն կատարած աշխատանքի։

28. Տաք ցեխերում, ստորյերկրյա ու ծանր վնասակար աշխատանքներում զբաղված աշակերտների համար դրույքները բարձրանում են 10-ից 20 տոկոսով նորմալ պայմաններում աշխատող աշակերտների համեմատությամբ։ Աշակերտներին կարգից-կարգ (6 ամիսը 1 անգամ) փոխադրելու դոյություն ունեցող դրությունը պահպանելով հանդերձ, միաժամանակ լայն գործադրել աշակերտների ժամկետից առաջ կարգից-կարգ փոխադրելու դերը, դպրոցում և արտադրության մեջ նրանց ցույց տված առաջադիմության համեմատ։

29. Ծառայողների և կրտսեր սպասարկու կազմի վարձատրությունը կատարում է ըստ պաշտոնական դրույքների համաձայն սույն պայմանագրին կցված պաշտոնների բաժանման տախտակի (հավելված № 2)։ Այս խմբի աշխատողների համար սահմանված աշխատավարձի ֆոնդի սահմաններում, դրույքները սահմանվում են գործարանային

բաժինների աշխատողների համար, համագործարանային վարչության միջոցով. ցեխային վարչբաժինների աշխատողների համար ցեխային վարչության միջոցով։ Դրույքները սահմանման հողի վրա ծագած կոնֆլիկները բոլոր դեպքերում լուծվում են համագործարանային ԳԿՀ-ի կողմից։

30. Վարչությունը պարտավորվում է մեկ ամսվա ընթացքում ուղիղ գործարքի փոխադրել հաշվային, գրասենյակային, լաբազի պլոտի և նավի վրայի աշխատողները։ Բաժինների գործարանային վարչությունը և ցեխային մնացած հաշվային գրասենյակային ծառայողների նկատմամբ վարչությունը պարտավորվում է մեկ ամսվա ընթացքում պարգևատրում սահմանել, աշխատանքը ժամանակից առաջ և համապատասխան վարակով կատարելու դեպքում։

31. Վարչությունը պարտավորվում է մինչև ապրիլի 1-ը անհատական և խմբակային ուղիղգործարքի փոխադրել բանվորների վոչ պակաս, քան 85 տոկոսը և ոժանդակ ցեխերի բանվորներին վոչ պակաս ..... տոկոսը։ Սրա հետ մեկտեղ գործարք անցկացնել նաև մնացած անհրաժեշտ տեղերում։

32. Արտադրանքի նորմաները սահմանում է վարչությունը, յելնելով հարվածային բանվորից հաշվի առնելով տեխնիկական անխուսափելի պարապուրդները խոտանի նորմալ տոկոսը, և աշխատանքի ժամանակ հանգստի համար անհրաժեշտ ժամանակը։ Դրա հետ մեկտեղ վարչությունը պարտավորվում է բանվորների համար տեխնիկական հրահանգում կազմակերպել այնպիսի հաշվով, որպեսզի յուրաքանչյուր նոր սահմանվող արտադրանքի նորմայի առթիվ բանվորը մանրամասն հրահանգ ստանա աշխատանքի այն մեթոդների մասին, որոնց հիման վրա, պետք է կատարվի նոր նորման։ Վերանայված նորմաները սահմանվում են մեկ տարվա համար։ Նորմաների վերանայումը թույլատրվում են այն դեպքում, յերբ փոփոխվում է աշխատանքի տեխնոլոգիական պայմանները և կիրառվումեն բանվորի արտադրանքը բարձրացնող տեխնիկական կամ կազմակերպչական նոր միջոցառումները, ինչպես նաև այն դեպքում, յերբ նորմաները բացահայտորեն բարձրացված, կամ իջեցված է։ Նորմաներն ու գնահատումները ժամկետից ա-

ռաջ վերանայելու բոլոր դեպքերում այդպիսին կատարվում է ԳԿՀ-ի միջոցով, ցեխի կամ ցեխային կոմիտեյի միջոցով։

33. Սույն աշխատանքներում (թվելմանբամասը), վոր արտադրանքի նորման համապատասխանում է արտադրական պլանի տարվա կեսին պլանը բարձրացման ուղղությամբ փոխադրելու դեպքում, յեթե այդ փոխման հետ չեն փոփոխվում նաև տեխնիկական և կազմակերպչական պայմանները։ Արտադրանքի նորմաները համապատասխան չափով բարձրացնում են արտադրանքի միավորի գնահատումները թողնվում են անփոփոխ։

34. Գործարքային գնահատումները վորոշում են գործարքով աշխատող տարիֆային դրույքը, բաժանելով արտադրանքի նորմայի վրա. սրանից դուրս այլ վճարումներ չպետք է լինեն։ Կոլպայմանագրի 25-րդ կետում թված առաջատար բանվորների համար պրոֆեսիոնալ բանվորների համար, գնահատումները բարձրացվում են այն տոկոսով, վորը սահմանված է նրանցից յուրաքանչյուրի համար իբրև առաջատար պրոֆեսիայի բարձր վորակավորման տեր բանվորի։

35. Աշխատավարձը կարգավորելիս և պլանային կարգով արտադրանքի նորմաներն ու գործարքային գնահատումները վերանայելիս, գործարանի վարչությունը ղեկավարում է սույն պայմանագրի 2-րդ կետով ստանալով կոնտրոլ թվերը։ Աշխատանքի բնույթի համաձայն հարմարանքները, սարքավորումները և գործիքները պատրաստելիս, յեթե դրա համար անհրաժեշտ ժամանակ հաշվի չի մտել տվյալ գործարանի աշխատանքների նորմաները կամ գնահատումները վորոշելիս։ Այդ աշխատանքների արժեքը բանվորները վճարում են գործարքային գնահատումից դուրս իբրև ինքնուրույն աշխատանքի։

36. Վարչությունը պարտավորվում է մեկ ամսվա ընթացքում մշակել արտադրանքի տեխնիկական սարքավորումը արտադրանքի նորմաների ու գործարքային գնահատումների վերանայելը պլանային կարգով սահմանել գործարքային գնահատումներն ըստ տեսակների այն հաշվով, վոր ցածր տեսակները վճարվեն ավելի ցածր քան առաջին տեսակը (մոտավորապես 2-դը 20 տոկոսով և 3-րդը 40 տոկոսով)։

37. Նորմաների ու գնահատումների հողի վրա բանվորների ու վարչության միջև ծագած կոնֆլիկտները լուծվում են ԳԿՀ-ի միջոցով մինչև կոնֆլիկտի քննությունը աշխատողն իրավունք չունի հրաժարվել իրեն վրա դրված աշխատանքից, թեկուզ համաձայն չլինի իրեն ներկայացրած գնահատմանը կամ աշխատանքի նորմային։

38 Աշակերտներին ուսման 2-րդ տարվանից սկսած թույլատրում են ձեռնարկություններում գործարքային աշխատանք կատարելու ընդ վորում նրանց վճարում են նույն գործարքային գնահատումներով, ինչ չափահաս բանվորներին, իսկ կրճատված ժամերի համար վճարումը ստանում են ըստ աշակերտական տարիֆային ցանցի։ Գործարքով աշխատող աշակերտների առաջադրությունները պետք է տրվեն համաձայն ուսումնական արտադրական ծրագրի անցածից։ Այն աշակերտները, վորոնք գործարքով աշխատանքի հետ միասին աշխատում են գործարքային բրիգադայում, ստանում են դրույքով աշխատողների, կամ ամբողջ բրիգադայի գերվարձային միջին տոկոսը, նրանց տարիֆային դրույքից։

39. Այն վորակյալ բանվորները, վորոնց աշակերտներ են ամրացված արտադրական

ուսման համար և վորոնք այդ աշխատանքը կատարում են համատեղության կարգով իրենց հիմնական աշխատանքին զուգընթաց, ամեն ամիս ստանում են լրացուցիչ վարձատրություն սովորող աշակերտների դրույքի 25 տոկոսի չափով։ Ընդ վորում 15 տոկոսը վճարում է ամեն ամիս, իսկ մնացածը կիսամյակի վերջում, այն դեպքում, յեթե աշակերտի քննությունը կբռնի։

Յեթե ուսումը կատարվում է գործարքային բրիգադում, ապա այն վորակյալ բանվորները, վորոնց ամրացված են աշակերտներ, կոմպենսացիա են ստանում նույն կարգով։

Վճարման նույնպիսի կարգ սահմանվում է նաև այն բանվորների վրա, վորոնց ղեկավարությամբ կատարվում է չափահաս բանվորների ուսուցումը։

Բրիգադային ուսման դեպքում վարչությունը պարտավոր է բոլոր աշակերտներին ամրացնել վոչ պակաս քան.....կարգի վորակյալ բանվորներին։

Աշակերտների բրիգադներին սովորեցնող արտադրական ուսման հրահանգիչները վարձատրվում են համապատասխան վորակ-

վորման տեր գործարքային բանվորների տարիֆային վճարի չափով 10—20 տոկոս լրացուցիչ չափով։

40. Տվյալ ձեռնարկությունում աշխատող և վորակավորման կամ վերավորակավորման նպատակով սովորող բանվորների վարձատրությունը կատարվում է վարչության կողմից հետևյալ հիմունքներով։

ա) Վորակյալ բանվորների վերավորակավորման դեպքում, նրանց վարձատրությունը կատարվում է հետևյալ աշխատանքի համար սահմանված գործարքային գնահատումներով, բայց վոչ ցածր քան.....կարգով, բանվորական ցանցի տարիֆային դրույքը, հետագայում վորակավորման բարձրացման համեմատ բարձրացնելով նաև վարձատրությունը։

բ) Հասարակ աշխատանքի բանվորներին կամ ցածր վորակավորման տեր բանվորներին վերավորակավորելու դեպքում վարձատրությունը կատարվում է.....կարգով։

41. Աշխատավարձը տրվում է ամիսը 2 անգամ, աշխատանքի ժամերից դուրս ըստ շրջանների յուրաքանչյուրի համար տարբեր ժամանակներում, այն է՝ ամսի 17-ին առա-

ջին կիսամյակի և 3-ին յերկրորդ կեսի համար։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՑՈՒՄ

42. Վարչությունը պարտավորվում է՝

ա) կատարել աշխատանքի պայմանների առողջացման (անվտանգության տեխնիկայի և սանիտարական) բոլոր միջոցառումները համաձայն աշխատանքի տեսության պայմանագրի և սույն պայմանագրերով սահմանվող ժամկետներին (հավելված № .....), գործարկումը պարտավորվում է ամենորյա հսկողություն սահմանել այդ նպատակի համար արտֆինպլանով նախատեսված գումարների ծախսման վրա։

բ) Վոչ ուշ քան 32 թվի ..... ամսվա .....ը ցեխը ապահովել սանիտարական-տեխնիկական պահանջներին համապատասխանող ճաշասրահներով այնպիսի ճաշարաններով, վորտեղ տեղավորվեն առնվազն 150 հոգի, յուրաքանչյուր շրջանում ճաշարանը սպասարկելու համար, կազմակերպել սառցարան բանջարեղեն և մթերքներ պահելու համար։

գ) Վոչ ուշ քան 32 թ. ..... ամիս .....ին վերակառուցել նախատեսնված բաղնիքը Նորագուղում և աշխատեցնել Ցելենովկայի բաղնիքը։

դ) Վոչ ուշ քան 32 թվի մարտի 1-ին բոլոր շրջաններում դնել լվացարաններ և ամեն մի աշխատողի համար 2 սրբիչ, այն հաշվով, վոր սրբիչը փոխվի կեղտոտվելուց վոչ պակաս 5 որը մեկ անգամ, բոլոր լվացարանները պետք է ունենան սապոն, կամ թե սապոնը պետք է տրվի բանվորին ամսեկան 200 գրամի չափով։

43. Արտահագուստները և բանվորների սեփական հագուստների համար վարչությունը պատրաստում է բոլոր շրջաններում, վորտեղ անհրաժեշտ է 2 աչքանի (մաքուր և կեղտոտ շորերի համար) պահարաններ։ Հագուստներ պահելու կարգը սահմանվում է ցեխային կոմիտեի համաձայնությամբ, ցեխի համար առանձին-առանձին հայտարարում է աշխատողներին. հանդերձատրոնում պահ տրված հագուստը կորչելու դեպքում, ձեռնարկությունը պարտավորվում է հատուցել կամ դրամով, կամ նատուրայով։

44. Մասնագիտական հագուստը և բոլոր չեզոքացնող նյութերը (ճարպ, հատուկ սա-

պոն և այլն) տրվում է ըստ ԽՍՀՄ-ի Աշխ-
ժողկոմատի սահմանած նորմաների, մաս-
նագիտական հագուստի լվանալը, կարկա-
տելը, ինչպես նաև մասնագիտական կոշիկ-
ների նորոգումը կատարվում է ձեռնարկու-
թյան հաշվին։ Մասնագիտական հագուս-
տից ու կոշիկից բացի վարչությունը պար-
տավոր է ըստ Աշխժողկոմատի նորմաների
բանվորներին տալ նաև արտահագուստներ,
որոնք պահպանեն բանվորների հագուստը
կեղտոտվելուց, ինքնարժեքով գանձել նը-
րանցից արժեքը։

Մասնագիտական հագուստը, արտահա-
գուստը և բորոր չեզոքացնող նյութերը
(ճարպ, հատուկ սապոն և այլն) աշակերտ-
ներին տրվում է նույն չափով, ինչ չափով
չափահաս բանվորներին, յեթե միայն նը-
րանք նույն աշխատանքն են կատարում։
Արտահագուստի համար պահումները կա-
տարում են մաս-մաս։ Արտահագուստները
չտալու, կամ ժամանակին չլինելու դեպ-
քում, վարչությունը բանվորներին փող է
վճարում յելնելով չտրված հագուստի ար-
ժեքից. ոգտագործման ժամկետից տարբերվ-
ած ժամկետի համեմատ։ Այն արտահագուս-

տը, որի համար, բանվորը վճարել է, նը-
րա սեփականությունն է համարվում։

45. Բանվորները պարտավորվում են
խնամքով վերաբերվել մասնագիտական հա-
գուստների և կոշիկների հետ, ինչպես նաև
սահմանված կարգով պահպանել, ինչպես
իրենց հագուստը, նույնպես և մաս-
նագիտական հագուստն ու կոշիկը։ Հագնե-
լու ժամկետը վերջանալիս, ինչպես նաև աշ-
խատանքից հեռացվելուց մասնագիտական
հագուստն ու կոշիկը պետք է վերադար-
ձնել. առանց հինը վերադարձնելու նորը չի
տրվում։ Ձեռնարկության կողմից բանվոր-
ներին տրված գույքը (մասնագիտական հա-
գուստ, կոշիկ, ակնոցներ գործիքներ և այլն)
յուրացնելու, դիտավորյալ կերպով փչա-
ցնելու, կամ վոչնչացնելու համար աշխա-
տողները պատասխանատու յեն ինքնարժե-
քի հնգապատիկ չափով, դուրս գալով ա-
մորտիզացիան։ Սույն գույքը կորցնելու,
կամ վոչ դիտավորյալ կերպով, այլ անփ-
ութության պատճառով փչացնելու համար,
աշխատողը պատասխանատու յե հնգապա-
տիկ չափով դուրս գալով ամորտիզացիան,
ըստ ԳԿՀ-ի, կամ աշխատեսչի սահմանած

չափի։ Գահում կատարում են միայն ԳԿՀ-ի կամ աշխատեսչի վորոշումից հետո, աշխատողին հասանելիք ամեն տեսակի գումարներից, բայց յուրաքանչյուր վճարման ժամանակ 25 տոկոսից վոչ ավել։

46. Վարչությունը բուժակների համար շենք և հատկացնում, ձկնորսարանների հողամասում տալիս և նրան տնտեսական սարքավորումներ, փոխադրական միջոցներ հիվանդացող բանվորին հիվանդանոց կամ տուն փոխադրելու համար, բոլոր շրջաններում և առանձին խմբակներում ունենալ դեղարկղներ, վորոնց հսկողությունը դրվում է հատուկ անձնավորությունների վրա, ցեխային կոմիտեների համաձայնությամբ, ստորյերկրյա տաք և ֆլասակար աշխատանքներում, բոլոր բանվորներին պետք է տրվեն անհատական բուժ ծրարներ։ Վարչությունը և գործարկոմը պարտավորվում են բոլոր նոր ընդունվող աշակերտներին նախորոք պրոֆեսիոնալ ընտրության յենթարկել, իսկ ուսման ամբողջ շրջանում սիստեմատիկ բժշկական քննության յենթարկել։

47. Վարչությունը պարտավորվում է

սահմանված ժամկետներին կատարել սանմինիմումի բոլոր միջոցառումները ըստ Աշխ-ժողկոմատի պայմանագրի և համաձայնեցնելով առողջապահական մարմինների հետ (ԽՍՀՄ ԺԿԽ-ի 30 թ. 20 մայիսի վորոշումը) գործարկոմը պարտավորվում է սիստեմատիկ հսկողություն սահմանել վարչության ու բանվորների միջև կնքված պայմանագրի կատարման վրա։

48. Վարչությունը պարտավորվում է կուրորտ, սանատորիա և հանգստյան տուն ուղարկել 5 հոգի հարվածայիններ, վորոնք կատարում և գերակատարում են պլանային առաջադրությունները, բուժման ու հանգստի կարիք են զգում, ուղեգիրները (պուտյովկաները) գնելու համար հատուկ գումար հատկացնելով պարգևատրման ֆոնդից։

49. Վարչությունը պարտավորվում է բնակարանային շինարարության համար արդիֆինպլանով բաց թողնված 20000 ռ. գումարից ծախսել բնակարաններ կառուցելու համար.....ռուբլի, իսկ գոյություն ունեցող բնակարանային ֆոնդի հիմնական վերանորոգման համար.....ռ.

Տների կառուցումը պետք է կատարվի վոչ ուշ, քան 32 թ. ..... ամսի .....ին, իսկ վերանորոգումը պետք է ավարտվի 32 թվի ..... ամսին։

Գործարանի վարչությանը պատկանող տների, սենյակների բաշխումը կատարվում է վարչության միջոցով գործարկոմի հետ համաձայնեցնելով։ Սենյակ ստանալու գերազանց իրավունք ունեն հարվածային բանվորները և տնտեսավարական բրիգադների բանվորները, դյուտարարները և տվյալ ձեռնարկությունում աշխատող յերկարամյա աշխատանքի ստաժ ունեցողները։ Կառուցվող տների սենյակները բանվորների վրա բաշխվում է նախորդ, վորպեսզի տան ապագա բնակիչները մասնակցեն տները ժամանակին կառուցելու վրա հասարակական հսկողություն սահմանելու գործին։ Վարչությունը պարտավորվում է արտֆինպլանով բաց թողնված գումարով հնարավորության սահմաններում ֆաբգործուսի հանրակացարան կառուցել։

Վարչությունը պարտավորվում է բնակարանային շինարարության համար արտֆինպլանով բաց թողնված

գումարներից հատկացնել ..... ռ. բանվորական ավանի ծառատնկման համար։

50) Արտադրական ընույթի պատճառներով (ռացիոնալացման, անպետք լինելու, բանակ գնալու, ուսման գնալու և այլն) գործարանից հեռացվող բանվորներն ու ծառայողները կարող են գործարանի տներից հեռացվեն պայմանով, վոր նրանց բնակարան տրվի այլ տեղում, իսկ աշխատանքային կարգապահության համար վտարվողները յենթակա են հեռացման առանց այլ բնակարան հատկացնելու։ Դժբախտ պատահարների, մահացած բանվորների ընտանիքները տներից չեն հեռացվում։

51. Դժբախտ պատահարներից մահացած բանվորների ու ծառայողների ընտանիքներին վարչությունը միանվագ նպաստ է տալիս, մահացածի ամսական աշխատավարձի չափով։

52. Արձակուրդները տրվում են ըստ Աշխժողկոմատի սահմանված դրույքների, թե ինչ չափով ինչ պրոֆեսսիայի համար է տրվում, վորի համար վարչու-

թյունը պարտավորն է խորոք իմանալու և արձակուրդները վորոշելու համար։

53. Վարչությունը պարտավորվում է հարմարեցնել (կամ նոր կառուցել) բոլոր շրջաններում ճաշարաններ, ինչպես տաք նախաճաշ կազմակերպել նաև ֆաբրիկներում։ Բացի դրանից վարչությունը պարտավորվում է կոոպերատիվի հետ պայմանագրերով և գործարկոմի մասնակցությամբ արտոնյալ պայմաններով տաք նախաճաշ կազմակերպել բոլոր անհրաժեշտ խմբակներում (ուռկաններում), դրա հետ միասին վարչությունը պարտավորվում է ոժանդակություն ցույց տալ կոոպերացիայի աշխատողներին, մթերք մատակարարելու գործում ..... ռ. վարկ բաց թողնելու, բանջարեղենների (և այլն զարգացնելու համար), ինչպես վոչ ուշ քան ..... ամսին ձեռնարկության հողամասերում, կամ մուտքերում շենք հատկացնել փակ բաշխիչների համար։ Գործարանային կամ փակ ճաշարանները և բուֆետները նորոգվում են վարչության հաշվին։

54. Գործարկոմը պարտավորվում է սիստեմատիկ հսկողություն կազմակերպել փակ բաշխիչների և ճաշարանների աշխատանքների վրա և ամենորյա գործնական ոգնություն ցույց տան բանվորներին մատակարարման ու սննդի բարելավման գործում։

55. Վարչությունը պարտավորվում է մասնակցել ձեռնարկության մսուրների, մանկապարտեզների, պիոներ ջոկատների ու հրապարակների կազմակերպման բոլոր ծախքերին։

56. Վարչությունն ամբողջ աշխատավարձի, ինչպես գործարքային, նույնպես ժամանակավարձ աշխատողների մեկ ու կես տոկոսի չափով հատկացում է կատարում միության կուլտաշխատանքների համար, դրանից բացի վարչությունը պարտավոր է.—

ա) Ազատել այլ նպատակների համար զբաղված կարմիր անկյունների շենքերը և կարմիր անկյունների համար շենք արամադրելը, վոչ ուշ, քան 1932 թ. մարտի 1-ին Զաղալյում հատկացնել կարմիր անկյուն, հայթ-

հայթելով նրանց կահավորումը (սեղան, աթոռ և այլն, լուսավորել, տաքացնել, մաքրել իր հաշվին)։

բ) Իր հաշվին պահպանել, լուսավորել, տաքացնել, վերանորոգել տվյալ ձեռնարկությունում սպառարկվող կարմիր անկյունները։

գ) Յելենովկայի կառուցվող շենքում ձեռնարկել կարմիր անկյան կառուցումը և վորպիսին ավարտել վոչ ուշ, քան 32 թ. ..... ամսին։

դ) Իր հաշվին ռադիոֆիկացիայի յենթարկել Զաղալվի կարմիր անկյունը, վոչ ուշ, մինչև 32 թ. ..... ամսին տրամադրել ..... ռուբլի ռադիո-հանդույցն ընդարձակելու համար։

յե) Մասնակցել գործարանի մամուլին, (թերթի բաժանորդագրմանը) ֆինանսավորել 100 ռուբլի գումարով։

6. ՊՐՈՖՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

57. Պրոֆմիությանն անդամները, այլ հավասար պայմանագրի հետ միասին վայելում են հետևյալ առավելությունները.

ա) աշխատանքի պահել այն դեպքերում, յերբ ձեռնարկությունն ազատվում է ավելորդ բանուժից, կամ այլ ձեռնարկություններում այլ աշխատանքի ընդունել։

բ) ավելի բարձր վորակավորման աշխատանքի փոխադրվել։

գ) ընդունվել դպրոցներն ու վորակավորման բարձրացման դասընթացներ։

դ) առաջին հերթին ընակարաններ ստանալ գործարանի տներում.

յե) իրենց յերեխաներին առաջին հերթին զանազան դպրոցներ ու մանկապարտեզներ ընդունել տալ։

զ) առաջին հերթին ուղարկել հանգստի տներ, կուրորտներ և սանատորիաներ։

7. ՄԻԶՈՑՆԵՐ ՊՐՈՖԿԱԶՄԱԿԵՐՊԻԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ

58. Գործարկոմի կարիքների համար վարչությունը հատկացնում է ամբողջ աշխատավարձի մեկ ու կես տոկոսի չափով. տոկոսները տրվում են, ինչպես մշտական, նույնպես զորքարքով և ժամանակավարձով աշխատողների ընդհա-

նուր աշխատավարձից, վարչությունը պարտավորվում է գործարկումին և ցեխային կոմիտեներին տրամադրել պիտանի և կահավորված շենքեր, ծախսերը հոգալով վարչության հաշվին (վառելիք, հեռախոս, մաքրություն, վերանորոգում, պահպանություն և այլն) նաև վարչությունը պարտավորվում է գործարկումի ազատված աշխատողներին հատկացնել բնակարան և վառելիք հիմնարկության հաշվին։

Վարչությունը պարտավորվում է խմբկոմի ազատված աշխատողներին փոխադրել իր փոխադրական միջոցներով, ինչպես ձկնորսարանները նույնպես և հեռու ընկած ուռկանները, պրոֆմիութենական աշխատանքները կատարելու համար։ Իսկ յեթե այդ փոխադրումը կատարվի նավագնացության փոխադրական միջոցներով, այն դեպքում վարչությունը պարտավոր է վճարել փոխադրական ծախքը։

Ազատված աշխատողներին հատկացնել բնակարան և վառելիք հիմնարկության հաշվին։

59. Սույն պայմանագրի կատարման վրա հսկելու և աշխատանքային կոնֆլիկտները լուծելու համար կազմակերպվում է համագործարանային և ցեխային ԳԿՀ-ներ, որոնք գործում են Աշխժողկոմատի կանոնադրությամբ։

8. ԿՈԼՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԿԱՐԳԸ

60. Վարչությունը և գործարկումը պարտավորվում են կազմակերպել փոխադարձ պարտավորությունների ամենորյա սիստեմատիկ ստուգում, կոլպայմանագրերի խախտում հայտնաբերելիս, վարչությունը և գործարկումը պարտավորվում է միջոցներ ձեռք անել այն վերացնելու համար։

61. Ամեն 3 ամիսը մեկ անգամ վարչությունը և գործարկումը պարտավորվում են կոլպայմանագրերի մասնական ստուգում կազմակերպել, կոլպայմանագրերը խախտելու համար մեղավոր աշխատակիցներից կոնկրետ մեղավորները յենթակա յեն քրեական պատասխանատվության ըստ քրեական

որենսգրքի 160-րդ հոդվածի։ Յուրաքանչյուր բանվոր և ծառայող յենթակա յեն դիսցիպլինայի պատասխանատվության, ըստ տուժացուցակի պատասխանատու յե արտադրական ընկերական դատարանի առաջ, իսկ իբրև պրոֆմիության անդամ իրենց պրոֆկազմակերպության առաջ։ Վարչությունը պարտավորվում է վոչ ուշ, մինչև ապրիլի 15-ը կազմել ներքին կարգապահական կանոններ և այդպիսին փակցնել բոլոր շրջաններում ու գործարաններում և առանձին խմբակներում։

62. Վարչությունը պարտավորվում է տպագրել սույն պայմանագիրը բոլոր հավելվածներով և 500 որինակ, վոչ ուշ քան 1932 թ. ապրիլի 15-ը ձրի բաժանել բոլոր աշխատողներին։

Սույն կոլպայմանագիրը տարածվում է ձուկարդյունաբերության մեջ աշ-

խատող բոլոր բանվոր-ծառայողների վրա, նաև ձկնաբուծական բանվոր-ծառայողների վրա։

Սույն պայմանագիրն ուժի մեջ է 1-ը մայիսի 1932 թվից մինչև 1-ը մարտի 1933 թիվը։

ՁՈՒԿԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԽՄԲԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՅԵ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՁՈՒԿԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏՐԵՍՏԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝ ԵՄ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Սույն պայմանագիրը տոմարագրված է Ն. Ախտայի աշխատեսչի կողմից

ԶՈՒԿ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՏԱՐԻՖԱՅԻՆ ՏԱԽՏԱԿ

№№	ՊԱՇՏՈՆԻ ԱՆՈՒՆԸ	Հիմնական աշխատավարձ	
1	Լաբազի ավագ ուռկանավար	100	—
2	Զինելչիկ 1-ին կարգ	70	—
3	» 2-րդ կարգ	60	—
4	Աղ—արող	110	—
5	» ոգնական	50	—
6	Եքսպ. ձկ. տես. 1. Յելենովկա	64	98
7	» 2. »	55	30
8	Գլոտի բանվոր և ձուկ դարսող	39	64
9	Պահակ	55	—
10	Ուռկանավար 1-ին կարգ	100	—
11	» 2-րդ կարգ	80	—
12	» 2-րդ կարգ սեզ.	80	—
13	Ձեռքի թոռ գցող	60	—
14	Գրորեզի բանվոր	46	25
15	Պահեստի »	42	90
16	Ուռկան քաշող	52	—
17	Կառապան	50	68
18	Ավագ դարբին	120	—
19	» » ոգնական	100	—
20	Աշակերտ	45	—
21	Հավաքող 1-ին կարգ	55	—
22	» 2-րդ »	45	—

23	Կանապատչիկ 1-ին կարգ	200	
24	» 2-րդ »	100	
25	Թիթեղագործ	110	
26	Նավավար 1-ին կարգ		
27	» 2-րդ »		
28	Մեքենավար 1-ին »		
29	» 2-րդ »		
30	Յուղիչ		
31	Նավաստի 1-ին կարգ		
32	» 2-րդ »		
33	Տրակտորիստ 1-ին »		
34	» 2-րդ »		

Ծանոթություն. № 1

Նավի վրա աշխատողների նավաստիների, մեքենավարների, նավավարների և ուղղիչների, տրակտորիստների նույնպես և նույն պաշտոնների ոգնականների աշխատավարձը և տարիֆային դրույքը թողնվում է նավագնացության մեջ աշխատողների նույն պաշտոնների ամսեկան աշխատավարձի չափին, իսկ տրակտորիստներինը գոյություն ունեցող տրակտորիստների տարիֆային դրույքի և ամսեկան աշխատավարձի չափին։

Ձկարդի խմբկոմ՝ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայձուկտրեստի կառավարիչ՝ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍԵՎԱՆԻ ԶԿՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՑԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՏԱՐԻՖԱՅԻՆ ՑԱՆԿ

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՈՒՆԸ	Հիմնակ. աշխ.		Նագ. բուզկ. չափը		Ընդամենը	
	Ռ.	Կ.	Ռ.	Կ.	Ռ.	Կ.
Մասնագետ տասնապետ	175	—	—	—	175	—
» ձկնաբուծ 1-ին կ.	125	—	10	—	135	—
» » 2-րդ կ.	110	—	10	—	120	—
Գահակ գոբծարանին կից	70	—	—	—	70	—
Կառապան—ձիապահ	80	—	12	—	92	—
Գորեկ բեղմնավորող	70	—	—	—	70	—
Գորեկ ջոկող	55	—	—	—	55	—
Գորեկ փոխադրողներ	75	—	—	—	75	—

Ձկնարդյունաբերության շրջխմբկոմի
նախագահ՝ Ցե. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ձկնաբուծության գլխավոր վարիչ՝
Ա. ՊԱՊՈՎ

ԱՐԽԻՎ
ԳՐԱԳԱԼԱՑ

ՀՀ Ազգային գրադարան
NL0936518

1
3504